



Saints Joachim & Anne Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor
Rev. Fr. DIRAN PAPA ZIAN, Archpriest
Տ. ՏՈՐՈՍ ԱՌ. ԲԷՆՅ. ՓԱՍՏԵԱՆ, Հովիւ

8 Մայիս, 1994

Գեո. Տ. Խաժակ Արք. Պարսամեան,
Առաջնորդ,
Առաջնորդարան Հայոց, Նիւ Եորք, Ն.Յ.

Սիրելի Արքեպիսկոպոս,

Կը յիշէք անշուշտ որ ասկէ առաջ քանիցս պատեհութիւն ներկայացած է եւ պարզած եմ ձեզի մտադրութիւնս՝ հանգստեան կոչուելու մասին: Թէեւ Հայ եկեղեցականի մը համար խորթ կը թուի հանգստեան կոչուելու զաղափարը, բայց եւ այնպէս մենք շատ յաճախ ստիպման ասկ կ'ըլլանք հետեւելու դարուն ընկերային կարգուսարքին: Արդ, ժամանակը եկած կը համարիմ որպէս զի հարցը պաշտօնականացուի: Ըստ այսմ ուրեմն՝ կը դիմեմ ձեզի որ զիս արձակէք Հովուական պաշտօնավարութենէս, տարուոյս Յունիս 30-էն վերջ եւ Յուլիս 1-էն սկսեալ, Ս. Յովակիմ եւ Աննա Հայաստանեայց եկեղեցւոյ, ի Փալոս Հայթց, Իլինոյ: Իսկ ինչ կը վերաբերի տարուոյն երկրորդ կիսամեակին, այդ մասին խօսակցած եմ ձխական խորհուրդին հետ եւ յանգած ենք ընդհանուր առմամբ հետեւեալ որոշումին, ըստ որում Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն՝ մէկական Կիրակի միայն պատարագ կը մատուցուի - Վարդավառ եւ Վերափոխում - իսկ մնացեալ չորս ամիսներուն երկուական պատարագ, որու ժամանակացոյցը դեռ եւս չէ պատրաստուած: Նաեւ այդ շրջանին պատահելիք ծիսակատարութեանց եւ խորհրդակատարութեանց կատարման յանձնառու եղած եմ: Համաձայնութիւն գոյացուցած ենք նուէրի եւ ժամուցի սակագինին ինչպէս նաեւ ծախքերու վճարման պատասխանատուութեան վերաբերմամբ որու յանձանձումը պարզ է թէ կ'իյնայ ձխական խորհուրդին տնօրինութեան: Իսկ 1995-ի Յունուարէն սկսեալ, իրենք կը յուսան իրենց մնայուն Հովիւը ունենալ, եթէ միաբերնին չի փոխեն մինչեւ այն ատեն՝ զոհանալով մասնակի ժամանակով Այցելու Հովիւով միայն, առժամեայ կարգադրութեամբ կամ անորոշ ժամանակով:

Գալով իմ ծրագրիս՝ Հովուական պաշտօնավարութենէս դադրելէ յետոյ, ես առժամայէս կը փոխադրուիմ Տիթրոյթ, Միչիկան որ իմ քնակավայրս եղած է ըսկիզբէն ի վեր եւ ուր կը գտնուի նաեւ մեր տունը: Ապագային կը թողունք այլուր փոխադրուելու կարելիութիւնը երբ աւելի բարենպաստ պարագաներ կամ պայմաններ ստեղծուին նման ծրագրի մը իրականացման համար: Մինչ այդ Առաջնորդարանի տրամադրութեան ներքեւ կը դնեմ անձս, ի հարկին զանազան պէտքերու



Saints Joachim & Anne Armenian Apostolic Church

Շար...


հասնելով եթէ կարիքը զգացուի: Կրնամ նաեւ ընտելալայրիս՝ Ս. Յովհաննէս Սկրաիչ Եկեղեցւոյ եւս կրնամ օգտակար ըլլալ եթէ հրաւէր ուղղուի: Ըմեն պարագայի պիտի ուզէի օգտակար ըլլալ որքան տուն որ ուժերս կը ներեն, եւ պիտի չուզէի երբէք որ տարիներու ընթացքին ամբարած հմտութիւնս եւ ձեռք ձգած փորձառութիւնս պարսպի վատնուէին:

Եթէ ուրեմն այս ներկայացուած ծրագիրը ձեր հաւանութեան կնքժանանայ իր ընդհանուր զիջերուն մէջ, այդ պարագային ձեզմէ պիտի խնդրեմ որ պաշտօնականացնէք զայն նամակով մը որպէս զի ներկայացուի ծիսական խորհուրդին առ ի գործադրութիւն, եւ մենք ալ ըստ այնմ կարենանք տնօրինել մեր գործերը, շփոթութիւններու առաջըը տոնելով: Եթէ ուզէք նաեւ հրաժեշտի օր մը թելադրել ծիսական խորհուրդին, այդ եւս կրնաք յիշել նամակին մէջ, յարմար թուական մը առաջարկելով այդ նպատակին համար:

Ի վերջ ըսնիս կ'ուզեմ աւելցնել նաեւ սա կէտը՝ եթէ վերոյիշեալ ընդհանուր հասկացողութիւնը եւ պայմանները նկատի ունենալով՝ փափաքիք զիս ժամանակաւորապէս գրեւ այցելու Հովիւ նշանակել Փալոս Հայթի Եկեղեցւոյն, ես այդ պաշտօնը սիրով կ'ստանձնեմ մինչեւ տարեվերջ կամ ի հարկին ցնոր տնօրինութիւն, որպէս զի կարելի եղածին չափ հեզասան փոխանցում տեղի ունենայ: Եւ անշուշտ այդ պարագային պաշտօնագիր մը կրնայ դիրքս զօրացնել, որոշ հեղինակութիւն մը տալով ինձի, եւ չի թողուլ որ գործերը կամայական ձեռքերու մէջ խաղալիք դառնան:

Նկատելով որ ժամանակը սրընթաց կնքշաւէ, փափաքելի պիտի ըլլար ձեր տեսակէտը ունենալ առաջին հերթին:

Ձեր աստուծահաճոյ գործերուն Տիրոջ առաջնորդութիւնը հայցելով,
Սնամ ջեր ողջունիւ,

Խոնարհ Աղօթակից՝

Տ.Տիրան Ա.Լ.Քինյ. Փափագեան